ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ Ε/13/64-21 առ "18" 01 2021թ.

Ձեր _____ առ "___" _____ 2021թ.

«Սայտոն» ՍՊԸ-ի տնօրեն՝
պրն. Հ. Հովհաննիսյանին
E-mail: tont@list.ru

[№01/294 առ 16.09.2020թ. պայմանագրի
միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար *փականների* (այսուհետ՝ ապրանք) ձեռք բերման նպատակով 2020թ. հուլիսի 23-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-93/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարման նպատակով «Սայտոն» ՍՊԸ-ի և ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2020թ. սեպտեմբերի 16-ին կնքվել է թիվ 01/294 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 548 000 (հինգ հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ-ն) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարված 4 հատ 17c11нж տեսակի ապահովիչ փականը, որի ընդհանուր գինը կազմում է 548 000 (հինգ հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից չի ընդունվել ապրանքի որակը հավաստող՝ պայմանագրով սահմանված ուղեկցող փաստաթղթերը չներկայացնելու պատճառով:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի՝

- 2.4.1 կետի <<Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով>>
- 2.4.4 կետի <<Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանգրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

- 2.1.7 կետի <<Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Սայտոն» ՍՊԸ-ի հետ 2020թ. սեպտեմբերի 16-ին կնքած թիվ 01/294 պայմանագիրը:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվի նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Գլխավոր տնօրենի ժ/պ՝ **Է. Մարտիրոսյան**